




ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(27 օգոստոսի 1995 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ ի պարթևական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր, վասն որոյ բարեխօսութեամբ սորա Փրկիչ կեցո զմեզ այժմ և ի քո յահաւոր գալստեանն»:

«Աստված հրաշափառ և միշտ բարեխնամող, որ կանխագիտութեամբ Հայաստանցիներիս փրկութիւնը սկզբնավորեցիր, մեզ շնորհելով լուսավորիչը պարթևական մեղապարտ տոհմից. ո՛վ փրկիչ մեր, նրա բարեխօսութեամբ մեզ կյանք պարգևիր այժմ և քո ահալոր գալստյան ժամանակ»:

Սրբազան շարականագիրը, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հիմնադրութեան առիթով, վերոհիշյալ տողերով է գովաբանում Ս. Գրիգոր Լուսավորչի աստվածային նախախնամութեան կողմից նախատեսված դերը հայ ժողովրդի կյանքում: Այնտեղ նշվում է, որ նա մեղապարտ ընտանիքից էր սերվել, սակայն, հակառակ դրան, նրա դերը մեծ եղավ մեր Եկեղեցու կյանքում: Աստված նախատեսել էր, որ նա փրկիչը լինէր հայաստանցիներիս իր մշտական աղոթքներով այժմ և մեր Տիրոջ ահալոր երկրորդ գալստյան ժամանակ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմէոս առաքյալներից հետո, եղավ երկրորդ լուսավորիչը Հայաստանյայց Եկեղեցու և քրիստոնէութեան պետական կրոն ընդունման մեծագոյն սատարն ու ջատագովը: Նա իր իսկ զոհողութեամբ և չարչարանքներով կարողացավ աստվածային շնորհը ստանալ: Երկար տարիներ մնաց Խոր Վիրապի արգելարանում և աստվածային հրաշքով այնտեղից ազատվեց, բուժեց հայոց Տրդատ Գ արքային և նրա պալատականներին և սպա քրիստոնէութիւնը կարողացավ Հայաստանում դարձնել պետական կրոն: Այսօր 1700 տարիների պատմութիւնն է, որ մեր աչքերի ստաշ պատկերվում է:

գամավորներ: Նրանցից առաջինն էր հանգուցյալ Սերովբե արքեպիսկոպոսը: Երկրորդ ներկայացուցիչը լինելու պատիվը ինձ էր վիճակված:

18 երկար տարիներ Գարեգին Երկրորդը վարում է կաթողիկոսությունը Մեծի Տանն Կիլիկիո: 1983 թվականից, Խորեն Կաթողիկոսի վախճանումից հետո, նա դառնում է լիիրավ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: Եվ ահա 1995 թվականին Ս. Էջմիածնի Մայր տաճարում գումարված Ազգային Եկեղեցական պատգամավորական ժողովը ընտրում է նրան Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Հայրապետին վերակոչելով Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետ:

Այս կենսագրական հակիրճ տողերը բավարար չեն ներկայացնելու Ամենայն Հայոց Հայրապետի դիմագիծը, եթե մենք չփորձենք ներկայացնել նրա հոգևոր, մշակութային, ազգային, կրթական բազում ծառայությունները: Այժմ ես կփորձեմ չորս կետերի մեջ ամփոփել նրա կերպարը:

Առաջին և ամենակարևոր հանգամանքն այն է, որ Աստված առատորեն պարգևել է մեր Հայրապետին իր շնորհները մշակույթի բոլոր ապարիզներում: Դրանք հատկապես դրսևորվում են գրի ու գրականության մեջ: Վեհափառը հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների՝ թե՛ աստվածաբանական, թե՛ պատմական և թե՛ ուսուցողական ու դավանաբանական:

Սրանով արդեն Վեհափառ Հայրապետի անձը ի հայտ է գալիս որպես գրի, մշակույթի և գրականության մարդ:

Վեհափառի երկրորդ կարևոր հատկանիշը նրա կոչումով դաստիարակ և ուսուցիչ լինելն է: Արեղա ձեռնադրվելու առաջին օրվանից նա նվիրվել է կրթական գործին ոչ միայն դպրեվանքում, այլ նաև Բեյրութի ազգային վարժարաններում՝ դասավանդելով կրոն և քրիստոնեական գիտելիքներ: Նա իր գիտակցական կյանքի ամբողջ ընթացքում դասավանդել ու սովորեցրել է, աստարել նոր սերնդի հոգևոր ու բարոյական կրթությանը: Վրստահ ենք, որ Ս. Էջմիածնում ևս նա կշարունակի սերունդների դաստիարակության գործը մասնավորապես հոգևոր ճեմարանում՝ իր իմացական լույսը տալով սերունդներին, ինչպես Աստված առատորեն պարգևել էր իրեն:

Նրա երրորդ հատկանիշը բնութագրվում է էկումենիկ և միջազգային հարաբերությունների ասպարեզում ցուցաբերած անգնահատելի ծառայությամբ: Վեհափառը երկար տարիներ նվիրվել է Եկեղեցիների միության գործին՝ լինելով գործուն և հավատավոր մեկ մասնակիցը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի: ԵՀԽ-ում նա ծառայել է իբրև Կենտրոնական Կոմիտեի, Գործադիր Կոմիտեի և ապա նրա ղեկավար մարմնի անդամ: Վեհափառը այդ ասպարեզում ի սպաս է դրել իր բոլոր շնորհները և միջազգային բարձրագույն ատյաններում ևս փորձել է միշտ հայ ժողովրդի իրավունքներն ու դատը պաշտպանել, լսելի դարձնել հայոց պահանջն ու իրավունքները աշխարհին:

Վեհափառ Հայրապետի չորրորդ կարևոր հատկանիշը նրա նվիրյալ, հեռախոս և հայրենասեր հոգևոր առաջնորդ լինելն է: Նրա հայրենասիրության սահմանները շատ ընդարձակ են: Իր միջազգային լայն կապերի շնորհիվ նա կարողացել է մարդասիրական մեծ գործունեություն ծավալել աշխարհով մեկ՝ զանազան միջոցներով:

Արդեն իսկ լինելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Վեհափառ Հայրապետը, որպես իր ծառայասիրական, հայրենասիրական ոգու արտահայտություն, խոնարհաբար հանձն առնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գա-

հակալությունը, դարձավ հայ ժողովրդին առաջնորդող հոգևոր առաջին դեմքը հայրենիքում: Հայրենիքում, վստահ ենք, որ նա նորանկախ մեր երկրում մեծ չափով իր ծառայությանը և նվիրումով օգտակար կլինի իր ժողովրդի վերելքին և մեծապես կնպաստի մեր ներկայի կյանքը անորոշություններից ու դժվարություններից դուրս բերելու դեպի բարօրություն և երջանկություն:

Ինձ համար դժվար է այս պահին ամփոփ խոսքերով ներկայացնել Ամենայն Հայոց Հայրապետի կերպարը որպես մարդ ու որպես մշակույթի գործիչ, որպես հոգևորական և որպես հայ: Ես պարզապես այս մի քանի սեղմ գծերով փորձեցի բնութագրել Վեհափառին այսօր՝ իր տարեդարձի տոնակատարության առթիվ: Մայր Աթոռի միաբանության և հավատացյալների սրտաբուխ մաղթանքն է, որ Աստված ուժ, կարողություն պարգևի Վեհափառին, որպեսզի Մովսեսի առաջնորդող տեսիլքով, Ահարոնի ծաղկյալ գավազանով, Սողոմոնի իմաստությամբ, Դավիթ մարգարեի հոգևոր թոհիչքով նա առաջնորդի մեր Եկեղեցու նալը ներկա կյանքի շփոթ ժամանակներում դեպի խաղաղ նավահանգիստ: Այս առթիվ տեղին ենք համարում հիշել շարականագրի հետևյալ տողերը, որոնք այնքան պատշաճում են մեր այսօրվա քահանայապետին:

«Այսօր քահանայապետ ճշմարիտ աստուածային օրինօքն պատուեալ կանգնէ զքառանկին սեղան խաչին, արժանապես պատարագեալ բաշխէ զմարմին և զարիսն Տեառն. մաքրապես մերձեցարուք փրկեալք նոր ժողովուրդք և հաջեցէք ի Քրիստոսէ զի շնորհեացէ զսա մեզ ընդ երկայն աւուրս»:

«Այսօր քահանայապետը աստվածային ճշմարիտ օրենքով պատվված՝ կանգնեցնում է քառանկյուն սեղանը խաչի, արժանավոր կերպով պատարագվելով՝ բաշխում է մարմինն ու արյունը Տիրոջ. մաքրությամբ մոտեցեք, ո՛վ փրկված նոր ժողովուրդ, և խնդրեցե՛ք Քրիստոսից, որ սրան շնորհի երկար օրեր մեզ համար»:

Աստված երկար կյանք պարգևի Հայոց Հայրապետին, Ամեն:

